ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 17 հոկտեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով «Օլիմպ» արտադրական կոոպերատիվի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Օլիմպ» արտադրական կոոպերատիվը 2011թ. սեպտեմբերի 26-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի վերջին նախադասության, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ «ՀՀ հարկային օրենսդրության եւ հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերի խախտումների համար պատասխանատվությունը» դրույթի, 4-րդ գլխի 21-32-րդ հոդվածների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես, վերջինիս 1-ին, 18-րդ եւ 19-րդ հոդվածների պահանջներին:

1. Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը դիմողի նկատմամբ ընդհանրապես կիրառված չէ, ինչի մասին վկայում են դիմումին կից դատական ակտերը, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. օգոստոսի 10-ի եւ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2011թ. հունիսի 23-ի որոշումները:

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի՝ անհատական դիմումին ներկայացվող պահանջներից մեկն էլ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից դիմողի նկատմամբ վիճարկվող իրավանորմի **կիրառումն է**: Նշված հոդվածի 1-ին մասում ամրագրված որևէ պայմանի բացակայության դեպքում դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ /ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման 6-րդ կետ/:

2. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ «ՀՀ հարկային օրենսդրության եւ հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերի խախտումների համար պատասխանատվությունը» դրույթի եւ 4-րդ գլխի 21-32-րդ հոդվածների առնչությամբ նախ հարկ է արձանագրել, որ մատնանշված իրավադրույթները դիմողի նկատմամբ **չեն կիրառվել,** ինչը չի վիճարկվում նաեւ նրա կողմից:

Բացի դրանից, հարկ է նկատի ունենալ, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի եւ 63-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանը գործը քննում է **համապատասխան դիմումի առկայության դեպքում**, իսկ որոշումներ ընդունում է **միայն դիմումում նշված առարկայի վերաբերյալ**:

Ասվածից հետեւում է, որ սահմանադրական դատարանն իրավասու չէ սեփական նախաձեռնությամբ որոշել որեւէ իրավական ակտի սահմանադրականությունը, ինչպես նաեւ որոշում ընդունելիս դուրս գալ դիմումում նշված առարկայի սահմաններից: Այլ խնդիր է, որ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում նշված որեւէ նորմատիվ ակտի սահմանադրականությունը որոշելիս պարզում է նաեւ այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը /«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մաս/: Սույն դրույթի վերլուծությունը վկայում է, որ վիճարկվող իրավանորմերի հետ նորմատիվ համապատասխան ակտի այլ դրույթների համակարգային առումով փոխկապակցված լինելու հանգամանքը որոշում է սահմանադրական դատարանը **եւ ոչ թե դիմողը:** Ի դեպ, դիմողը վերոհիշյալ նորմերի սահմանադրականությունը վիճարկում է սոսկ վկայակոչելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասը:

3. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի վերջին նախադասության առումով՝ սույն անհատական դիմումի քննությունը մերժելու՝ օրենքով սահմանված հիմքերը բացակայում են, քանի որ դիմողի կողմից պահպանվել են սահմանադրական դատարան դիմելու համար օրենքով սահմանված ընդունելիության բոլոր պայմանները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով, 68-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1.«Օլիմպ» արտադրական կոոպերատիվի անհատական դիմումով գործը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի վերջին նախադասության մասով ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

3. Տվյալ անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ «ՀՀ հարկային օրենսդրության եւ հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերի խախտումների համար պատասխանատվությունը» դրույթի, 4-րդ գլխի 21-32-րդ հոդվածների մասով մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

17 հոկտեմբերի 2011 թվականի
ՍԴԴԿՈ/2-13